Հայտարարություն

Վարձակալական պայմանագրի տեխնիկական աուդիտորական ծառայության հետաքրքրության հայտերի ներկայացման

Երկիր
Հայաստանի Հանրապետություն

Հղում
«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր:

Ծանուցում
Հայաստանում Տեխնիկական աուդիտի ծառայությունների միջազգային բաց մրցույթ

Ծրագիրն իրականացնող մարմնը
ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե / ՋՏՊԿ/

Ֆինանսավորումը
«Վեոլիա Ջուր» ընկերության՝ Վարձակալի կողմից

Ծրագիրը
2016թ. նոյեմբերի 21-ին ստորագրված վարձակալական պայմանագրով ՋՏՊԿ-ի կողմից «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը 15 տարով վարձակալությամբ փոխանցվել է «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ԿԲԸ ընկերությանը: «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ԿԲԸ ընկերությունը, համաձայն ՀՀ օրենսդրության, Հայաստանի Հանրապետությունում հիմնադրել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը, որը պայմանագրային 15 տարիների ընթացքում (2017-2031թթ.) պետք է իրականացնի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ՝ պայմանագրով սահմանված սպասարկման տարածքում:

Որպես վարձակալության պայմանագրի դրույթ՝ ՋՏՊԿ-ի և միջազգային մասնավոր կառավարչի միջև համաձայնեցվել են տեխնիկական և կոմերցիոն կատարողական ցուցանիշներ: Այս ցուցանիշները մասնավորապես ներառում են ջրամատակարարման շարունակականությունը, ջրի որակի համապատասխանությունը ստանդարտներին, ջրի կորուստների կրճատումը, գույքի արդյունավետ շահագործումն ու բարելավումը և այլն:

Պահանջվող ծառայությունները
Վերը նշված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող վարձակալի ծառայությունների կատարողականության տեխնիկական աուդիտ իրականացնելու համար ՋՏՊԿ-ն պետք է գնի որակավորված խորհրդատվական ծառայություն: Այդ նպատակով ՋՏՊԿ-ն հայտարարում է միջազգային փորձառու ընկերության/ կոնսորցիումի բաց մրցույթ, որը կմատուցի աուդիտորական ծառայություններ՝ պայմանագրային առաջիկա 5 տարիների համար (2017-2021թթ.):

Որպես պայմանագրի կողմ ընկերությունը/կոնսորցիումը /այսուհետ Աուդիտոր/ պայմանագրի գործողության ընթացքում կստանձնի պարտավորություններ և պատասխանատվություն՝ Վարձակալի ծառայությունների կատարողականության աուդիտ

իրականացնեու համար: Վարձակալի գործունեության արդյունքները գնահատելու համար սահմանված կատարողական ցուցանիշները պետք է համեմատվեն բազիսային տարվա ցուցանիշների հետ: Աուդիտորը նաև պետք է գնահատի պայմանագրային տարիների ընթացքում Վարձակալի կողմից մատուցվող ծառայությունները, անհրաժեշտության դեպքում ներկայացնի նաև Վարձակալական պայմանագրի դրույթներին համաձայն վճարման ենթակա տարեկան տուժանքների հաշվարկը:

Նշված և սույն մրցույթի մաս կազմող տեխնիկական առաջադրանքում ներառված խնդիրների լուծման նպատակով ՋՏՊԿ փնտրում է որակավորված միջազգային խորհրդատվական ընկերություն/ընկերությունների կոնսորցիում, որի հետ, որպես աուդիտորի, կկնքվի տեխնիկական աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ սկսած 2017թ. առաջին եռամսյակից:

<u>Լրացուցիչ տեղեկատվություն</u>

Մրցույթին կարող են մասնակցել վերջին 3 տարիների ընթացքում նվազագույնը 1 մլն Եվրո տարեկան շրջանառություն, ջրային ոլորտում տարածաշրջանային աուդիտորական փորձ ունեցող ընկերությունները/կոնսորցիումը:

Ընկերությունները/ կոնսորցիումը նախաորակաորման փուլի համար հետաքրքրության նամակին կից պետք է ներկայացնեն.
ա/ Ընկերության վերջին 3 տարիների համապատասխան գործունեության մասին տեղեկատվություն /ոչ ավելի, քան 3 էջ/,
բ) երկու հիմնական փորձագետների CV-ները

- Ծրագրի ղեկավար,
- Տեղական թիմի ղեկավար:

Նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով և պաշտոնակատար անձի անունով՝ մինչև 2017 թվականի փետրվարի 7-ը.

Հ. Հարությունյան
ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ-ի կոմիտեի նախագահ
Երևան 0010, Վարդանանց փող. 13ա, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +37410 540264 կամ (540277), Ֆաքս. +37410 540613, +37410 540277
Էլ. փոստ. scws@scws.am.

Նախաորակավորման փուլն անցած և կարճ ցուցակում ընդգրկված ընկերությունները այդ մասին կտեղեկացվեն ՋՏՊԿ-ի կողմից և կծանուցվեն մրցույթի «Հայտերի ներկայացման հրավերը» ձեռք բերելու վերաբերյալ:

Հետաքրքրությունների հայտերը կարելի է գտնել նաև հետևյալ կայքէջում՝ www.devbusiness.com.

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ